ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի ապրիլի 11-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 25/3»**

Վաղարշապատի համայնքապետարանի «Բարեկարգում տնօրինություն» ԲՀ-ի կարիքների համար **Էջմիածին քաղաքի փողոցների,ճանապարհների և հետիոտների անցումների գծանշման աշխատանքների** ձեռք բերման նպատակով կազմակերպված **«ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 25/3»** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 10.04.2025 թ. ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 11.04.2025 թ. տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում 1

Խնդրում եմ հայտնել ինչ ստանդարտներով են իրականացվել 3 870 կգ ներկի պահանջի հաշվարկները և տրամադրել հաշվարկի համար հիմք հանդիսացած փաստերը /ստանդարտներ, արտադրողից պարզաբանում և/կամ այլն/:

Պարզաբանում 1

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք, որ ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 25/3 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին կից պայմանագրի տեխնիկական բնութագրով ներկի պահանջի հաշվարկները իրականացվել են <Բարեկարգում տնօրինություն> ԲՀ-ի կողմից՝ հաշվի առնելով քաղաքային պայմանները, և երկար տարիների աշխատանքային փորձը:

Հարցադրում 2.1

Ներկերն ի պահ տրվելու դեպքում խնդրում եմ հստակեցնել, թե ի պահ հանձնված ներկերն ու՞մ է պատկանելու սեփականության իրավունքով և արդյո՞ք աշխատանքների ավարտից հետո ավելացված ներկը վերադարձվելու է կատարողին, թե՝ ոչ:

Պարզաբանում 2.1

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք , որ աշխատանքների ավարտից հետո ներկը չպետք է ավելանա, իսկ ի պահ տրված ներկի պահպանման համար պատասխանատվություն է կրում՝ Պատվիրատուն:

Հարցադրում 2.2

Տեխնիկական բնութագրով նշված չէ, թե որտե՞ղ, ե՞րբ և ու՞մ միջոցներով պետք է տեղափոխվի 3 870 կգ ներկը: Կատարողի կողմից տեղափոխվելու դեպքում արդյո՞ք պատվիրատուն պարտավորվում է իր վրա վերցնել նման մեծ քանակությամբ ներկի տեխափոխման ծախսը: Կատարողի կողմից տեղափոխվելու դեպքում, հաշվի առնելով ներկի մեծ ծավալները, հնարավոր է արդյո՞ք ներկի մասնակի տեղափոխում, թե՝ ոչ:

Պարզաբանում 2.2

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք,որ 3870կգ ներկը պետք է տեղափոխվի Վաղարշապատի համայնքապետարան՝ Սբ.Մ.Մաշտոց 0 հասցե, սահմանված ժամկետներում Կատարողի կողմից:Պատվիրատուն պարտավոր չէ իր վրա վերցնել տեղափոխման ծախսերը, իսկ ներկի մասնակի տեղափոխում հնարավոր չէ :

Հարցադրում 2,3

Հաշվի առնելով որ աշխատանքներն իրականացվելու են թե՛ ցերեկային, թե՛ գիշերային ժամերին՝ ինչպե՞ս է պատվիրատուն ապահովելու ներկի բացթողումը և ի՞նչ եղանակով է նշված գործընթացը կազմակերպվելու:

Պարզաբանում 2.3

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը, հայտնում ենք Պատվիրատուն պարտավորվում է ապահովել ներկի բացթողումը օրվա ցանկացած ժամի՝ Կատարողի հետ նախապես համաձայնեցնելով:

Հարցադրում 3

Տեխնիկական բնութագրով նշված չէ, թե պայմանագրի կնքումից հետո ե՞րբ և ի՞նչ եղանակով է պատվիրատուն ապահովելու աշխատանքների իրականացման տարածքի տրամադրումը կատարողին:

Պարզաբանում 3

Հարգելի՛ մասնակից, ի պատասխան Ձեր հարցմանը պատվիրատուն պարտավոր է Կատարողին տրամադրել աշխատանքների իրականացման տարածքը աշխատանքները սկսելուց առաջ՝ նախապես համաձայնեցնելով Կատարողի հետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել **«ՀՀ ԱՄՎՀ ԲՏ ԳՀԱՇՁԲ 25/3»** ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար **Լուսինե Քալաշյանին**:

Հեռախոս **+374 94 27 07 00, +374 231 5 36 63 /520,113/**
Էլ. փոստ՝ **fingnum@mail.ru**
Պատվիրատու՝ **Վաղարշապատի համայնքապետարանի«Բարեկարգում տնօրինություն» ԲՀ**